

Ի ՍԻՄՅԵՐԱՊՈԼՈՅ՝

Ա Ր Չ Ա Գ Ա Ն Ք

Հ Ա Յ Հ Ա Ս Ե Ր Ե Կ Ո Ւ Թ Ե Ը Ն

Պատուական «Մշակ», լրագրոյն տա-
 րւոյս 7րդ թուոյն մէջ Անդակի առիթով
 վերնագրով հրատարակուած յօդուածը
 ամբողջ Ռուսաստանի Հայ հասարա-
 կութեան և անտարակոյս Տաճկաստան
 եղողներուն ևս խօսակցութեան առարկայ
 եղաւ այս օրերս. վասն զի տեսն որ
 Ա. Ե. Մայրապետի ամենայն Հայոց Ան-
 դակին ամենապարզ միտքը անգամ յօ-
 դուածագիրն հասկացած չ', և իբրև ինքը
 աստուածաբան՝ հոգեբանական իրողու-
 թիւններ և վկայութիւններ կրնտուէ:

Թողունք սկիզբէն այն խօսքը՝ որ կասէ
 թէ «Անդակին մէջ նախ և յառաջ ըն-
 թերցողին աչքին է ընկնում հեռեեալ
 տեղը, «երկրորդ անտարակուսելի իմն
 ճշմարտութիւն և յն», և այժմ տես-
 նենք թէ ինչ ասել կամի այս խօսքով,
 թէ՛ հաւատք կամ անհատական է և կամ
 ծիսական. այս աստուածաբանական բա-
 ժանմունքը նորելուկ բան մի երևեցաւ
 մեր աչաց. վասն զի պարզ կերպով այն-
 պէս ճանչցուած է, որ եթէ անձնական
 կամ անհատական հաւատ կայ, միւսը
 պէտք է ըլլայ ընդհանրական. ազգի մը
 հաւատը նոյն ազգին մէջ ընդհանրական
 է. իսկ նոյն ազգայնոց իւրաքանչիւրոց
 հաւատը անձնական կամ անհատական:
 Ուստի յօդուածը ծիսական հաւատ մը
 մեզ սորվիցնելով՝ ամենքնիս ալ գայ-
 թակղութեան մէջ ձգեց, վասն զի յայտ-

նի կերևի՝ որ ասել կամի թէ Ս. Լ. Ջմիած-
 նայ քարոզածը և ընդհանուր ազգին ըն-
 դունած հաւատը այսօր ծիսական է, հե-
 տեաբար ինչ ասել որ կամեցիր է յօ-
 դուածը՝ ընթերցողք լաւ կհասկընան:
 Իայց յայտնի է՝ որ աւելի կտխալի. մենք
 կհասկընանք՝ որ կրօնքը որ և է հաւատոյ
 ճշմարիտ ճանաչելոյն ներքին և արտաքին
 ապացոյցն է, և ներքինը միշտ արտաքի-
 նով կապացուցուի: Աթէ կրօնի մը մէջ
 գտնուի այնպիսի մարդ՝ որ հաւատ չու-
 նենայ ներքին համոզմամբ, բայց երեսանց
 նոյն կրօնին արտաքին արարողութիւն-
 ները ձևի համար կատարէ, զայն ո՞վ կըր-
 նայ ընտրել, ճանաչել և զիանալ, ինչ-
 պէս որ նոյն իսկ յօդուածն ալ կերպով
 մը կասէ թէ՛ «անհատական հաւատը
 անհնարին է ենթարկել հրամանների և
 կարգադրութիւնների», որովհետեւ ճըշ-
 մարիտը զիանալ կարելի չէ: Իսկ եթէ
 մէկը ճանչցիր է իւր ազգութեան կրօնին
 ճշմարտութիւնը, բայց արտաքին արա-
 րողութիւնները եթէ արհամարհէ՝ ոչնչի
 տեղ դնէ, ո՞վ կրնայ ասել թէ սա մեր
 կրօնը լաւ ճանչցած է և ընդունած, ո՞չ
 ապաքէն մարդս միշտ արտաքինով կըր-
 նայ դատել, և ներքինով դատել միթէ
 մարդո՞ւ գործ է: Ուրեմն երբէք Անդակը
 հաւատ բառով ճանչցած չէ, ինչպէս որ
 յօդուածագիրը կարծիր է միայն արտա-
 քին ճէտերը և արարողութիւնները, սյլ
 ճանչցիր է ճշմարտութեամբ՝ որ ազգի մը
 կրօնքն է ներքին և արտաքին ապացոյցը
 նոյն իսկ քարոզուած և ընդունուած հա-
 վատոյն ճշմարտութիւնը ճանաչելոյն:
 Աոյն Անդակը աւետարանին միայն մէկ
 կողմը կարգացած չէ իրեն նման. զի-

տէ նա թէ ի՞նչ է Յովհաննու Մկրտչի քարոզածը թէ ապաշխարացե՞ք, ի՞նչ է ապաշխարողներուն մկրտուիլը, ի՞նչ է նոյն խկ Վրիստոսի մկրտուիլը, ի՞նչ է այն վերջին պատէքին հացն առած օրհնած մանրածը և աշակերտաց տուածը **առէ՛ք և կերէ՛ք** ասելով . հապա շատ անգամ ինքը Վրիստոս Տէրն մեր բժշկութիւն արած ժամանակ բժշկելիներէն ինչո՞ւ արտաքին խոստովանութիւններ կը պահանջէր, որ մինչև անգամ ինքը կարող էր ներքինն ալ դիտնալ . ուրեմն եթէ գիտութեամբ չէ՛ շատ կսխալի այն յօդուածը երբոր կըրպարտէ՛ թէ Աոնդակը կամենում է պահպանել հաւատը ձէսերով և արարողութիւններով ժողովրդի մէջ, մոռնալով քիչ մը յառաջ իրեն ասածը թէ՛ « հաւատը կըլլայ անհատական և ծիսական », որ այս խօսքով ծիսականութիւնը իրեն համար զատ հաւատ էր ճանաչած և Աոնդակը միայն ծիսական հաւատ քարոզող . բայց այժմ տեսէ՞ք ինչ կերպ կասէ և խեղճին խիղճն ալ կերելի որ զինքը տանջեր է, որ քիչ մ'ալ վերջը կը բարբառէ՞ թէ, « աւետարանը մէկ տեղ քարոզած չէ՛ որ ձէսերը և արարողութիւնները գերազանց են բուն հոգևոր կողմից », չգիտենք որ հոգին ահանջն ի վար Բեռլէոսցե՞ր է թէ յիշեալ Աոնդակը կրօնքին ձէսերն ու արարողութիւններն գերազանց ճանչցած է հոգևոր կողմից, վասն զի Աոնդակին մէջ այնպիսի նշմարանք անգամ չերևար: Այժմ այս խօսքէն տեսանք՝ որ բաւական համոզուեր է թէ ձէսը զատ հաւատ չէ, ուստի կկնդրենք նոյն յօդուածագրէն որ ցուցանէ մեզ՝ թէ հին

և թէ նոր ազգաց մէջ կայ այնպիսի կրօն մը՝ որ ձէսեր և արարողութիւններ չունենայ. ցուցանէ մինչև անգամ այնպիսի և անհատ, որ յայտնած ըլլայ և յայտնէ իւր հաւատը միայն ներքինով, որ մենք ալ ճանչնանք թէ նա ի՞նչ հաւատոյ տէր էր և է: Այս մասին այսչափս բաւական ճանաչելով՝ այժմ այս ալ հարցնենք՝ թէ Արօնական Վրուխ մը չունի՞ արդեօք պարտաւորութիւն և իրաւունք իւր իշխանութեան տակ եզող կրօնի պաշտօնեաները յորդորել, խրատել և պատուիրել ժամանակ ժամանակ՝ որ իրենց պարտաւորութիւնները ճանաչեն, ժողովրդոց բարի օրինակ ըլլան, և առիթ չտան գայթակղութեան, յօրինապահութիւն յորդորեն, բարեգործութիւն գրգռեն և ին. և ին. և ո՞վ կրնայ ասել թէ Աոնդակին այն ասածները իւր պարտաւորութիւնը չէին և ժամանակը չէր՝ ինչպէս որ ինքն ասաց: Հայոց Աշկեղեցին անգամ էր կասէ յօդուածը՝ և ունէր արդէն դարերով յառաջ հաստատուած կանոններ. այն այդպէս է և ճշմարիտ, բայց այն դարերով յառաջ հաստատուած կանոններէն դուրս նոր Աոնդակը ի՞նչ նոր կանոններ հաստատեր է, որ ըստ քմաց յօդուածագրին ծանր երևնալ կպատճառէ ժողովրդին. ինդրենք՝ եթէ կարդացեր է դարերով յառաջ հաստատուած կանոնները, համեմատելով ցուցունէ մեզ՝ թէ որո՞նք են այդ նոր կանոնները՝ նոր Աոնդակին մէջ:

Ամնայ քանի մի խօսք ալ յօդուածին և այն կտորին վրայ ասել՝ թէ ամենէն յառաջ իրեն աչքին զարնելով այնքան ազմուկ էր յարուցեր Աոնդակին դէմ. ի՞նչ կամի ասել թէ մեր ազգին մէջ այն-

պիսի մարդիկ կան, որ ամենամոլեռանդ հաւատ ունին և իրենց մայրենի լեզուն կարհամարհեն. ամենամոլեռանդ հաւատը մին է արդեօք և ո՞վ է այդպիսի հաւատ ունեցողը, այս մէկ հիտաքրքրական գիտելիք պէտք է լինի և ի՞նչ ասել կամի ամենամոլեռանդ բառով. Ճշմարիտ և հաստատուն հաւատ ունեցող թէ՛ մօլորեալ մէկը. և ինչո՞ւ ամենամոլեռանդը պարտաւորած պիտի լինի իւր մայրենի լեզուն պահելու և չարհեր՝ որ ինքն էր ատողը թէ լեզուն հաւատի հետ կապ չունիւ չայն ու Պարսիկը կրօնքնին փոխելով լեզունին որ չփոխեցին կասէ, միթէ հաւատը լեզունի հետ կապ չունեցածին համար էր՝ թէ ամբողջ ազգ եղածին իր մէջը նոր կրօնք ընդունածին և նոյն կրօնքը ունեցող ազգին մէջ չխառնուածին համար. միթէ չունի՞նք ապացոյցներ Ասորակին այն խօսքին հաստատութեանը. Ահա հաւատան և Մաճառաստան գաղթող չայերը քիչ քիչ ի հաւատոյ թուրանալով չկորսնցուցին արդեօք իրենց հաւատոյ և ազգութեանը հետ և մայրենի լեզուն. Տաճկաստանի դէպի կաթողիկոսութիւն գիւմուշ չայերը արդեօք պահած կլինէին մինչև ցարդ իրենց մայրենի լեզուն, եթէ նոյն իսկ ազգայնոց մէջ մնացած չլինէին և Մխիթարեան միաբանութիւնը չհեռակէր մայրենի լեզուն ծաղկեցնելու. և միթէ ամեն տեղ ամեն ժամանակ չունի՞նք այնպիսի դէպքեր դժբաղդարար կատարուած՝ որ ի հաւատոյ թուրանալով երբ խոսնուի օտար ազգաց մէջ՝ իւր մայրենի լեզուն ալ ազգութեանը հետ կկորսունցունէ. կարծեմ յօդուածագրին բողոքաբեր

ալ սյնուէսնէր բաւական կը դանուինս Աւրիմն ի՞նչ օգուտ շահեցաւ թերթին և բնակիչը լեզնելու համար այդպիսի շողփաղիօսութիւններ հրատարակելն և ազգին վրայ նախատինք բերելն. և արդարեւ այդպիսի դրուածը ազգին իրաւամբ նախատինք կճանաչենք, վասն զի ազգին Պըլուսը կնախատէ և կաշխատի արհամարհելի ցուցնել հասարակութեան առանց հիմնական ապացուցի:

Ն. Ե. Թ.

Ի ՍԷՖԵՐԻՔԻՆ

ՀԱՅԿԵՐԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԴԵՍ

Մ Շ Ա Կ Ի Ն .

Մշակին մէջ զարմացմամբ կարդացի Ահհ. Ասթուղիկոսի Ասորակի աւթով գրուած ապուշ խորհրդածութիւնները և համարելով զայնս արդիւնք ազխաութեան նորին ի չայ լեզունի, կփութամ պատուական Արարատիդ միջոցաւ առաջին դասախօսութիւնը ընել Մշակին:

Չաստայոյ չայերն լեզուի մէջ կրնա նակէ հաւատոյ վերաբերեալ բաները և յարկապէս քրիստոնէից վերաբերեալ բարեպաշտական գործերը. իսկ որ և է քրիստոնեայ անձի մէջ հաւատոյ գոյութիւնը գործով կրմացուի և արատքին ցոյցերով կապացուցուի. ըստ որում հասարակութեան, կասն, չէ հեռի յանհասարակութիւն:

Եւ զարձեալ Տերն մեր չէր շատանար ըստ հասարոց և ըստ գործոց թողութիւն ապ մեղաւորաց և բժշկիկ ախտացեալները, հոգա Մշակին խոտած և պախարա-